# ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Աշխատություններ Հայաստանի Պետական Պատմական թանգարանի», հատոր 3-րդ։ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1950 թ., 167 էջ, տիրաժ՝ 750։ Բովանդակություն. Վ. ԲԴՈՅԱՆ, «Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ»։ ԷՄՄԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, «Գլխագիրը հայոց հարսանեկան սովորությունների մեջ և նրա սոցիալ-տնտեսական պայմանները»։ ՀՌԻՓՍԻՄԵ ԶԱՆՓՈԼԱԴՅԱՆ, «Դվինի պեղումներից հայտնաբերված ձկաձև անոթները»։

«Աշխատություններ հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի», № 2-րդ։ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1949 թ., 200 էջ, տիրաժ՝ 600։ Բովանդակություն. Գ. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «Բժշկականության պատմությունն ուսումնասիրելու խնդիրները»։ Վ. Մ. ԱՎԱԳՅԱՆ, «Հայկ. ՍՍՌ Կարմիր խաչի ընկերության գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին»։ Գ. Ղ. ՂԵՎՈՆԴՅԱՆ, «Բժշկականության դոկտոր Մարգար Հովհաննիսի Առուստամովը, որպես Ռուսաստանի բժշկական հասարակայնության ներկայացուցիչ 19-րդ դարի 2-րդ կեսին»։ Բ. Հ. ՄԵԼԻՔ-ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, «Համառոտ տեղեկություններ մեզ հասած ամենահին բժշկական բառարանի մասին»։ Հ. Հ. ՍԵՊԵՏՃՅԱՆ, «Դեղագործությունը Հայաստանում ըստ Ամիրդովլաթի», և այլ 8 հոդվածներ։

ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ, «Երկերի ժողովածու», հատոր 2-րդ (պոեմներ, լեգենդներ և բալլադներ, առակներ, թարգմանություններ)։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., տիրաժ՝ 5.000։

«Նախադպրոցական հասակի երեխայի հոգեբանության հարցեր»։ Հոդվածների ժողովածու (ՌՍՖՍՌ Մանկավարժական գիտությունների Ակադեմիայի Հոգեբանության ինստիտուտ)։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 192 էջ, տիրաժ՝ 2.000։

ՄԵՐԻ ՄԵՅՊ ԴՈՋ, «Արծաթե սահնակներ կամ Հանս Բրինկեր»։ Թարգմանություն Մ. Քաջազնունու։ Հայպետհրատ, Մանկա-պատանեկական գրականության բաժին, Երևան, 1950 թ., 300 էջ, տիրաժ՝ 7.000։

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ, «Երկերի լիակատար ժողովածու», 4-րդ հատոր («Քաոս», «Արտիստը», «Ընկերները», «Գաղափարի զոհին»)։ Խմբագրությամբ՝ պրոֆ. Հ. Ղանալանյանի։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 526 էջ, տիրաժ՝ 10.000։

ՋՈՐԴԱՆՈ ԲՐՈՒՆՈ, «Անվերջականության, տիեզերքի և աշխարհների մասին»։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 290 էջ, տիրաժ՝ 3.000։

ԶԱՐՅԱՆ ՆԱԻՐԻ, «Արմենուհի» պոեմ։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., տիրաժ՝ 5.000։

ԳՈՐԿԻ ՄԱՔՍԻՄ, «Երկերի ժողովածու», հատոր 2-րդ («Ֆոմա Գորդեև», թարգմանություն՝ Հ. Հարությունյանի և «Երեքը», թարգմանություն՝ Ս. Սուքիասյանի)։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 761 էջ, տիրաժ՝ 5.000։

ԳՈՐԿԻ ՄԱՔՍԻՄ, «Երկերի ժողովածու», հատոր 6-րդ («Ավելորդ մարդու կյանքը», «Ամառ», «Օկուրով քաղաքը»)։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 583 էջ, տիրաժ՝ 5.000։

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ, «Թերթիկներ իմ կյանքից» (ինքնակենսագրական հիշողություններ)։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 171 էջ (իլյուստրացիաներով), տիրաժ՝ 3.000։

ԿԱՏԱՐՅԱՆ Թ. Գ. «Ջիբենի» (Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բուսաբանական այգի)։ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1950 թ., 38 էջ, տիրաժ՝ 5.000։

ԲՈՇՅԱՆ Գ. Մ., «Վիրուսների և միկրոբների բնույթի մասին», Երևանում կայացած հրապարակային դասախոսության սղագրություն։ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1950 թ., 28 էջ, տիրաժ՝ 5.000։

ՔԱՔԱՅԱՆ ԱՐԱՄ, «Գրադարանային տերմինների բառարան», ռուս-հայերեն և հայ-ռուսերեն։ Հրատարակություն Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Կուլտ-լուս հիմնարկների գործերի կոմիտեի, Երևան, 1951 թ., 264 էջ, տիրաժ՝ 1.000։

ՊՈԼԵՎՈՅ Բ., «Մենք սովետական մարդիկ ենք», Հայրենական Մեծ պատերազմի իրական պատմություններ։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 454 էջ, տիրաժ՝ 6.000։

ՊԱՐՈՆՅԱՆ ՀԱԿՈԲ, «Մեծապատիվ մուրացկաններ»։ Նկարները՝ Հովհաննես Շավարշի։ Հայպետհրատ, Մանկա-պատանեկական գրականության բաժին, Երևան, 1950 թ., 78 էջ, տիրաժ՝ 5.000։